AMIO – ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՈՒ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ

Բանկի կողմից կիրառվող AMIO-հաշվարկային դրույքի սահմանման և հաշվարկման հիմք.

Առաջնային ցուցանիշ ► *1 (մեկ) տարի ժամկետայնությամբ ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունը:*

Առաջնային ցուցանիշի վերաբերյալ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ ՀՀ ԿԲ պաշտոնական կայքի համապատասխան հրապարակումները (եկամտաբերության կոր)՝ հետևյալ հղմամբ՝ https://www.cba.am/am/SitePages/fmofinancialmarkets.aspx

Նշված ինտերնետային հղման փոփոխումը որևէ ազդեցություն կամ հետևանք չի կարող ունենալ սույն կետով սահմանված տոկոսադրույքի փոփոխման վրա:

Եթե վերոնշյալ ցուցանիշը դառնում է անհասանելի, և անհնարին է դառնում տոկոսադրույքի սահմանումը հաջորդ ժամանակահատվածի համար, ապա տոկոսադրույքը հաջորդ ժամանակահատվածի համար սահմանվում է՝ հիմք ընդունելով Բանկի կողմից սահմանվող երկրորդային ցուցանիշը:

Երկրորդային ցուցանիշ ► *ՀՀ ԿԲ կողմից հրապարակված ֆիզիկական անձանցից մինչև 1 (մեկ) տարի ժամկետով (բացառությամբ ցպահանջ ավանդների) ներգրաված ՀՀ դրամով ավանդների տոկոսադրույքները:*

Երկրորդային ցուցանիշի վերաբերյալ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ ՀՀ ԿԲ պաշտոնական կայքի համապատասխան հրապարակումները՝ հետևյալ հղմամբ՝ https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx

Նշված ինտերնետային հղման փոփոխումը որևէ ազդեցություն կամ հետևանք չի կարող ունենալ սույն կետով սահմանված տոկոսադրույքի փոփոխման վրա:

Բանկի կողմից կիրառվող AMIO-հաշվարկային դրույքի փոփոխման կարգ

AMIO-հաշվարկային դրույքը հրապարակվում է Բանկի www.amiobank.am կայքում:

Հաշվարկային դրույքի փոփոխման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը:

Առաջնային ցուցանիշի փոփոխման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը: Փետրվարի 1-ի համար Հաշվարկային դրույքի հաշվարկման հիմք է հանդիսանում նախորդ տարվա հուլիսի 1-ից մինչև նախորդ տարվա դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար համապատասխան դրույքների միջին թվաբանականը:

Օգոստոսի 1-ի համար հաշվարկային դրույքի հաշվարկման հիմք է հանդիսանում տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ տարվա հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածի համար համապատասխան տոկոսադրույքների միջին թվաբանականը:

Ոչ աշխատանքային օրերին միջինի հաշվարկում կրկնվում է նախորդ աշխատանքային օրվա տոկոսադրույքը:

Երկրորդային ցուցանիշի փոփոխման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը: Փետրվարի 1-ի համար երկրորդային ցուցանիշը հաշվարկվում է որպես նախորդ տարվա հունիսից մինչև նախորդ տարվա նոյեմբերը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը:

Օգոստոսի 1-ի համար երկրորդային ցուցանիշը հաշվարկվում է որպես նախորդ տարվա դեկտեմբերից մինչև տվյալ տարվա մայիսը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը:

Եթե հաշվարկման պահին որևէ պատճառով բացակայում է տվյալ ամսվա ցուցանիշը, ապա հիմք է ընդունվում նախորդող ամսվա ցուցանիշը:

Բանկի վարկավորման շրջանակներում «հաստատուն ճշգրտվող» տարեկան անվանական տոկոսադրույք

1. Հաստատուն ճշգրտվող տոկոսադրույքի առաջին վերանայումը կարող է տեղի ունենալ 37-րդ ամսից սկսած: Դրանից հետո պարբերական վերանայումները կարող են իրականացվել յուրաքանչյուր 6 /վեց/ ամիսը մեկ:

2. Մինչև վերանայման առաջին ամսաթիվը AMIO-հաշվարկային դրույք է համարվում Վարկի տրամադրման պահին գործող AMIO-հաշվարկային դրույքը, առաջին վերանայումից հետո՝ տվյալ ժամանակահատվածի համար գործող AMIO-հաշվարկային դրույքը /այսուհետ Գործող AMIO հաշվարկային դրույք/:
3. AMIO- հաշվարկային դրույքը հաշվելիս ստացված մեծությունը կլորացվում է 0.5 տոկոսային կետի ճշտությամբ, օրինակ՝ 10.11% կդիտվի որպես 10%, 10.25% կդիտվի որպես 10.5%, իսկ 10.42%՝ որպես 10.5%:
4. Հաստատուն ճշգրտվող տոկոսադրույքը ենթակա է Բանկի կողմից փոփոխման, եթե տվյալ ժամանակահատվածի համար հաշվարկված AMIO հաշվարկային դրույքը և Գործող AMIO-հաշվարկային դրույքի տարբերությունը կազմում է 1%-ից ավել: Փոփոխությունը կարող է լինել առավելագույնը նշված տարբերության չափով:
5. AMIO-հաշվարկային դրույքը ենթակա է փոփոխման Բանկի կողմից, եթե տվյալ ժամանակահատվածի համար հաշվարկված տոկոսադրույքի և Գործող AMIO-հաշվարկային դրույքի տարբերությունը գերազանցում է 1%-ը, հակառակ դեպքում՝ AMIO-հաշվարկային դրույքը մնում է անփոփոխ:
6. AMIO-հաշվարկային դրույքի փոփոխության պայմանները կիրառելի են AMIO-հաշվարկային դրույքի և՛ նվազման, և՛ աճման նկատմամբ:
7. Հաստատուն ճշգրտվող տարեկան անվանական տոկոսադրույքը վարկային պայմանագրի գործողության ընթացքում վարկի տրամադրման ժամանակ սահմանված տոկոսադրույքի համեմատ չի կարող նվազել կամ աճել ավելի քան 2,5 տոկոսային կետով:

AMIO ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԴՐՈՒՅՔ (ՀՀ դրամ)	
Գործող	9%
01.02.2025-31.07.2025	9%
01.08.2024-31.01.2025	9.5%
01.02.2024-31.07.2024	9.5%
01.08.2023-31.01.2024	10%
27.03.2023-31.07.2023	10%